# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*17-ը հոկտեմբերի 2025թ.*

## ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

*Արձ.- 56*

*/Զեկուցող՝ Թ. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ/*

***N 137 - Ա ՈՐՈՇՈՒՄ***

*Հիմք ընդունելով քվեարկության արդյունքները, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով, Աշտարակ համայնքի ավագանին՝*

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.**

1. Հաստատել Աշտարակ համայնքի ավագանու 17.10.2025թ. արտահերթ նիստի օրակարգը /կցվում է/:

**Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝**

*ԿՈՂՄ - 20*

*ԴԵՄ- 0 ՁԵՌՆՊԱՀ – 0*

ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
ՇԱՆԹ ՎԱՀԱՆՅԱՆ
ՄԵՐԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ
ԱՐԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
ԳՈՌ ԱՐՇԱԿՅԱՆ
ՌՈՒԶԱՆՆԱ ՏՈՆՈՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ
ԺԱՆՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ
ԲԱՎԱԿԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ԱՐՏԱՇԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ՆԱԶԵԼԻ ԱՐՍԵՆՅԱՆ
ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
ՍՈՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ
ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ԳՆԵԼ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ
ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ
ԿԱՐԱՊԵՏ ԱՌԱՔԵԼՅԱՆ
ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ
ԱՐՄԵՆ ՇՄԱՎՈՆՅԱՆ
ԳԵՎՈՐԳ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

*Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ.Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

**ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ**

**<u>Օ Ր Ա Կ Ա Ր Գ</u>**

1. Աշտարակ համայնքի ավագանու արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:

*/Զեկուցող՝ Թ. Շահվերդյան/*

2. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի ավագանու 11.03.2025թ. N 27-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

*/Զեկուցող՝ Շ. Վահանյան/*

3. Աշտարակ համայնքում 2025 թվականի տեղական տուրքերի գծով արտոնություններ սահմանելու մասին:

*/Զեկուցող՝ Ս. Սահակյան/*

4. Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող 02-061-0196-0043 ծածկագրով հողատարածքից առկա հողագրունտի տեղափոխմանը համաձայնություն տալու մասին:

*/Զեկուցող՝ Ս. Սահակյան/*

5.Համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքն անհատույց օգտագործման տրամադրելու մասին:

*/Զեկուցող՝ Շ. Քոթանյան/*

6. Համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքը քանդելու մասին:

*/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/*

7. Հայաստանի Հանրապետությանը համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույք նվիրելու մասին:

*/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/*

**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ս. Ս Ա Հ Ա Կ Յ Ա Ն**

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*17-ը հոկտեմբերի 2025թ.*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 11.03.2025Թ. N 27-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

*Արձ.- 56*

*/Զեկուցող՝ Շ. ՎԱՀԱՆՅԱՆ/*

***N 138 - Ա ՈՐՈՇՈՒՄ***

*Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի պահանջներով, Աշտարակ համայնքի ավագանին՝*

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.**

1.Աշտարակ համայնքի ավագանու 11.03.2025թ. «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի 2024 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին» N 27-Ա որոշումը լրացնել հավելված 1.1-ով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝**

*ԿՈՂՄ - 20* *ԴԵՄ- 0* *ՁԵՌՆՊԱՀ – 0*

| | |
|---|---|
| ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ | ՆԱԶԵԼԻ ԱՐՍԵՆՅԱՆ |
| ՇԱՆԹ ՎԱՀԱՆՅԱՆ | ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ |
| ՄԵՐԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ | ՍՈՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ |
| ԱՐԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ | ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ |
| ԳՈՌ ԱՐՇԱԿՅԱՆ | ԳՆԵԼ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ |
| ՌՈՒԶԱՆՆԱ ՏՈՆՈՅԱՆ | ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ |
| ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ | ԿԱՐԱՊԵՏ ԱՌԱՔԵԼՅԱՆ |
| ԺԱՆՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ | ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ |
| ԲԱՎԱԿԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ | ԱՐՄԵՆ ՇՄԱՎՈՆՅԱՆ |
| ԱՐՏԱՇԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ | ԳԵՎՈՐԳ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ |

*Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

*Հավելված 1.1*

*Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի ավագանու 17.10.2025թ. N 138-Ա որոշման*

# 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՏԱՐԵԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ

Աշտարակ համայնքի 2024 թվականի բյուջեի տարեկան վարչական բյուջեի եկամտային մասով նախատեսված փաստացի եկամուտը կազմել է 4 606 111.7 հազար դրամ, որը տարեկան ծրագրի նկատմամբ (4 559 212.4 հազար դրամ) կատարվել է 101 %-ով (տե՛ս հատված 1): Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ գերակատարվել է 27.9 %-ով կամ 1 006 611.4 հազար դրամով:

***Ըստ հարկատեսակների կատարողականը ունի հետևյալ տեսքը.***

Հաշվետու ժամանակաշրջանում գույքային հարկեր անշարժ գույքի փաստացի եկամուտը կազմել է 352.392.8 հազար դրամ, որը կազմում է վարչական բյուջեի եկամուտների 7.6 %-ը, իսկ տարեկան պլանի նկատմամբ կատարվել է 123 %-ով:Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ գերակատարվել է 57.1 %-ով կամ 128.124.7 հազար դրամով:

Գույքային հարկեր այլ գույքից (փոխադրամիջոցների) գծով փաստացի եկամուտը կազմել է 668 968.7 հազար դրամ, որը կազմում է վարչական բյուջեի եկամուտների 14.5 %-ը, իսկ տարեկան պլանի նկատմամբ կատարվել է 101.9 %-ով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ գերակատարվել է 22 190.4 հազար դրամով:

Տեղական տուրքերի գծով փաստացի եկամուտը կազմել է 105707.5 հազար դրամ, որը կազմում է վարչական բյուջեի եկամուտների 2.3 %-ը, տարեկան պլանի նկատմամբ կատարվելով 72.0 %-ով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ գերակատարվել է 52 093.3 հազար դրամով:

Պետական տուրքերի գծով փաստացի եկամուտը կազմել է 29 079.2 հազար դրամ, որը կազմում է վարչական բյուջեի եկամուտների 0.6 %-ը, տարեկան պլանի նկատմամբ կատարվելով 102 %-ով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ գերակատարվել է 2 297.6 հազար դրամով:

Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիայի մասով նախատեսված 2 951938.8 հազար դրամը հատկացվել է: Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացման՝ սուբվենցիայի մասով հատկացվել է 635 823.0 հազար դրամ: Մասնակցայի բյուջետավորման համար հատկացվել է 167 698.5 հազար դրամ:

Այլ եկամուտների գծով փաստացի եկամուտը կազմել է 493 386.2 հազար դրամ, որը կազմում է վարչական բյուջեի եկամուտների 10.7 %-ը, իսկ տարեկան պլանի նկատմամբ կատարվել է 107 %-ով:

Այլ եկամուտների մեջ ներառված՝

Գույքի վարձակալությունից եկամուտների գծով փաստացի եկամուտը կազմել է 65 687.1 հազար դրամ, որը կազմում է վարչական բյուջեի եկամուտների 1.4 %-ը, իսկ տարեկան պլանի նկատմամբ կատարվել է 104 %-ով,

Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից եկամուտները կազմել է 3998.0 հազար դրամ, որը կազմում է վարչական բյուջեի եկամուտների 0.08%-ը, իսկ տարեկան պլանի նկատմամբ կատարվել է 100 %-ով:

Վարչական գանձումներից փաստացի եկամուտը կազմել է 387 177.1 հազար դրամ, որը կազմում է վարչական բյուջեի եկամուտների 8.4 %-ը, տարեկան պլանի նկատմամբ կատարվել է 101.8 %-ով:

Տույժերից և տուգանքներից փաստացի եկամուտը կազմել է 1 203.6 հազար դրամ, տարեկան պլանի նկատմամբ կատարվելով 12 %-ով, որը կազմում է վարչական բյուջեի եկամուտների 0.02 %-ը:

Այլ եկամուտների գծով փաստացի եկամուտը կազմել է 35 320.4 հազար դրամ, որը կազմում է վարչական բյուջեի եկամուտների 0.7 %-ը, տարեկան պլանի նկատմամբ կատարվելով 126 %-ով:

Վարչական բյուրջեի պահուստային ֆոնդը՝ որը կազմում է 1 150 000.0 հազար դրամ ուղղվել է ֆոնդային բյուջե:

***Ծախսերի գծով կատարողականը ունի հետևյալ տեսքը.***

Հաշվետու ժամանակաշրջանում փաստացի ծախսը կազմել է 5 306 066.9 հազար դրամ, պլանի նկատմամբ այն կատարվել է 76.9 % -ով (տես հատված 2):

Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների հատվածին հատկացվել է 932 199.6. հազար դրամ, որը կազմում է փաստացի կատարված ծախսերի 17.5 %-ը:

Տնտեսական հարաբերությունների գծով հատվածին հատկացվել է 1 557 763.5 հազար դրամ, որը կազմում է փաստացի կատարված ծախսերի 29.3 %-ը:

Ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերը բյուջեում արտացոլվում են տնտեսական հարաբերություններ մասում, բացասական նշանով և հաշվետու ժամանակաշրջանում կազմում են 892037.0 հազար դրամ, տարեկան պլանի դիմաց կատարվելով 22.4 %-ով:

Շրջակա միջավայրի պաշտպանության համար հատկացվել է 444571.6 հազար դրամ, որը կազմում է փաստացի կատարված ծախսերի 10.1 %-ը:

Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայության համար հատկացվել է 796 883.5 հազար դրամ, որը կազմում է փաստացի կատարված ծախսերի 15 %-ը:

Առողջապահության ոլորտին հատկացվել է 2 580.0 հազար դրամ:

Հանգիստ, մշակույթ և կրոն ոլորտի պահպանման համար հատկացվել է 471 989.9 հազար դրամ, կազմելով փաստացի կատարված ծախսերի 8.8 %-ը:

Կրթության ոլորտին է հատկացվել 1 073 667.1 հազար դրամ, որը կազմում է փաստացի ծախսերի 20.2 %-ը, որից՝ նախադպրոցական հիմնարկների պահպանման համար հատկացվել է 916 424.4 հազար դրամ, որը կազմում է փաստացի կատարված ծախսերի 17.2 %-ը, իսկ արտադպրոցական հիմնարկների պահպանման համար հատկացվել է 154182.8 հազար դրամ, որը կազմում է փաստացի կատարված ծախսերի 2.9 %-ը:

Սոցիալական պաշտպանություն ոլորտի համար հաշվետու ժամանակաշրջանում հատկացվել է 26411.7 հազար դրամ:

Հաշվետու ժամանակաշրջանում ընթացիկ ծախսերի (վարչական բյուջե) ֆինանսավորմանը հատկացվել է 4 367 783.0 հազար դրամ, որը կազմում է փաստացի կատարված ծախսերի 82.3 %-ը:

Ընթացիկ ծախսերից աշխատանքի վարձատրության հոդվածին հատկացվել է 583 786.7 հազար դրամ կամ վարչական ծախսերի 13.3 %-ը, ծառայությունների և ապրանքների ձեռք բերմանը հատկացվել է 231 041.5 հազար դրամ կամ վարչական ծախսերի 5.2 %-ը: Սուբսիդիաների տեսքով ոչ ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին է հատկացվել համայնքի վարչական բյուջեի փաստացի կատարված ծախսերի 26.8 %-ը կամ 1 171 183.0 հազար դրամ, իսկ սուբսիդիաներ ոչ պետական (ոչ համայնքային) ոչ ֆինանսական կազմակերպություններին հատկացվել է 6 225.0 հազար դրամ կամ վարչական բյուջեի 0.1%-ը:

Դրամաշնորհ է հատկացվել համայնքային հիմնարկներին 1 174 839.2 հազար դրամ, որը կազմում է վարչական բյուջեի ծախսերի 26.8 %-ը, սոցիալական օգնության է հատկացվել 33 824.6 հազար դրամ կամ վարչական ծախսերի 0.7 %-ը:

Այլ ծախսերին հատկացվել է 1166 883.0 հազար դրամ, որի մեջ արտացոլվում է վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե հատկացումը, որը կազմում է 1150 000.0 հազար դրամ

Հաշվետու ժամանակաշրջանում համայնքային բյուջեի ծախսերի 56.1 %-ը կամ 2 980.321.0 հազար դրամը ուղղվել է ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի ֆինանսավորմանը, այդ միջոցներից 64 285.3 հազար դրամը կամ 1.2 %-ը տրամադրվել է մեքենաներ և սարքավորումներ ձեռք բերելու համար, 3 850.0 հազար դրամը հատկացվել է անշարժ գույք ձեռք բերելու համար 49 790.0 հազար դրամը կամ ֆոնդային բյուջեի ծախսերի 1.6 %-ը հատկացվել է նախագծահետազոտական աշխատանքների կատարմանը, 2 799 870.1 հազար դրամը կամ 93.9 %-ը շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգմանը, 62 525.6 հազար դրամը կամ ֆոնդային բյուջեի ծախսերի 2.0 %-ը՝ շենքերի և շինությունների կառուցման աշխատանքներին (տե՛ս հատված 3):

Աշտարակ համայնքի ֆոնդային բյուջեի պակասուրդը (դեֆիցիտը) կազմել է 134 762.4 հազար դրամ (տե՛ս հատված 4): Պակասուրդի (դեֆիցիտի) ֆինանսավորմանն է ուղղվել տարեսկզբի ազատ մնացորդը՝ 470720.4.1 հազար դրամ (տե՛ս հատված 4, 5), իսկ հաշվետու ժամանակաշրջանի վերջում վարչական բյուջեի հավելուրդը կազմել է 238 328.7 հազար դրամ:

**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ս. ՍԱՀԱԿՅԱՆ**

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*17-ը հոկտեմբերի 2025թ.*

## ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

***Արձ.- 56***

***/Զեկուցող՝ Ս. ՍԱՀԱԿՅԱՆ/***

***N 139 - Ա ՈՐՈՇՈՒՄ***

*Ղեկավարվելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի պահանջներով, Աշտարակ համայնքի ավագանին՝*

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.**

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված նախագծային փաստաթղթերում մակերեսի ավելացում նախատեսող փոփոխություններ կատարելու դեպքում, նոր շինարարության թույլտվություն տրամադրելիս՝ 2025 թվականի համար սահմանված տեղական տուրքը կիրառվում է միայն գերազանցող մասով և դիմումատուն (իրավաբանական անձի դեպքում նաև գործադիր մարմնի ղեկավարը) Աշտարակ համայնքի հանդեպ թույլտվության տրամադրման օրվա դրությամբ չունի ժամկետանց դրամական պարտավորություններ:

2. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան Աշտարակ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի և շինությունների շինարարության թույլտվության ժամկետների 2025 թվականի ընթացքում մեկ անգամ և մինչև 3 ամիս ժամկետով երկարաձգման համար 2025 թվականի համար սահմանված տեղական տուրքի դրույքաչափի նկատմամբ կիրառվում է արտոնություն՝ տեղական տուրքի դրույքաչափի նկատմամբ զրոյական դրույքաչափի կիրառմամբ, եթե դիմումատուն (իրավաբանական անձի դեպքում նաև գործադիր մարմնի ղեկավարը) Աշտարակ համայնքի հանդեպ թույլտվության ժամկետի երկարաձգման օրվա դրությամբ չունի ժամկետանց դրամական պարտավորություններ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ԱՎԱԳԱՆԻ՝**

| *ԿՈՂՄ - 20* | *ԴԵՄ- 0 ՁԵՌՆՊԱՀ – 0* |
|---|---|
| ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ | ՆԱԶԵԼԻ ԱՐՍԵՆՅԱՆ |
| ՇԱՆԹ ՎԱՀԱՆՅԱՆ | ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ |
| ՄԵՐԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ | ՍՈՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ |
| ԱՐԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ | ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ |
| ԳՈՌ ԱՐՇԱԿՅԱՆ | ԳՆԵԼ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ |
| ՌՈՒԶԱՆՆԱ ՏՈՆՈՅԱՆ | ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ |
| ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ | ԿԱՐԱՊԵՏ ԱՌԱՔԵԼՅԱՆ |
| ԺԱՆՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ | ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ |
| ԲԱՎԱԿԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ | ԱՐՄԵՆ ՇՄԱՎՈՆՅԱՆ |
| ԱՐՏԱՇԵՍ ԽԱԶԱՏՐՅԱՆ | ԳԵՎՈՐԳ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ |

*Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:*

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն**

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*17-ը հոկտեմբերի 2025թ.*

## ԱՇՏԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 02-061-0196-0043 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻՑ ԱՌԿԱ ՀՈՂԱԳՐՈՒՆՏԻ ՏԵՂԱՓՈԽՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

*Արձ.- 56*

*/Զեկուցող՝ Ս. ՍԱՀԱԿՅԱՆ/*

**Ն 140 - Ա ՈՐՈՇՈՒՄ**

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով «Ագրո Պրոմ» ՍՊԸ-ի լիազոր ներկայացուցիչ Էդգար Գևորգյանի 16.10.2025թ. N 13684 դիմումը, Աշտարակ համայնքի ավագանին՝*

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Համաձայնություն տալ ՀՀ Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի վարչական տարածքում գտնվող և համայնքային սեփականություն հանդիսացող 02-061-0196-0043 կադաստրային ծածկագրով հողատարածքից «Ագրո Պրոմ» ՍՊԸ-ին 1000 խմ հողագրունտի հանույթի տեղափոխմանը:

2. Հողագրունտի մեկ խորանարդ մետրի /խմ/ արժեքը սահմանել 500 ՀՀ դրամ:

3. Սույն որոշումից բխող հետագա իրավական ակտերի ընդունումը վերապահել Աշտարակ համայնքի ղեկավարին:

**Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝**

*ԿՈՂՄ - 20* *ԴԵՄ- 0* *ՁԵՌՆՊԱՀ – 0*

| | |
|---|---|
| ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ | ՆԱԶԵԼԻ ԱՐՍԵՆՅԱՆ |
| ՇԱՆԹ ՎԱՀԱՆՅԱՆ | ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ |
| ՄԵՐԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ | ՍՈՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ |
| ԱՐԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ | ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ |
| ԳՈՌ ԱՐՇԱԿՅԱՆ | ԳՆԵԼ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ |
| ՌՈՒԶԱՆՆԱ ՏՈՆՈՅԱՆ | ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ |
| ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ | ԿԱՐԱՊԵՏ ԱՌԱՔԵԼՅԱՆ |
| ԺԱՆՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ | ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ |
| ԲԱՎԱԿԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ | ԱՐՄԵՆ ՇՄԱՎՈՆՅԱՆ |
| ԱՐՏԱՇԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ | ԳԵՎՈՐԳ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ |

*Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*17-ը հոկտեմբերի 2025թ.*

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

*Արձ.- 56*

*/Զեկուցող՝ Շ. ՔՈԹԱՆՅԱՆ/*

***N 141 - Ա ՈՐՈՇՈՒՄ***

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով, Աշտարակ համայնքի ավագանին՝*

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Համաձայնություն տալ Աշտարակ համայնք, գյուղ Ուշի 4-րդ փողոց թիվ 3 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքը /կադաստրային ծածկագիր՝ 02-108-0039-0004/ «Աշտարակ համայնքի Ուշիի թիվ 20 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ին անհատույց օգտագործման տրամադրելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:

**Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝**

*ԿՈՂՄ - 20*

*ԴԵՄ- 0 ՁԵՌՆՊԱՀ – 0*

| | |
|---|---|
| ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ | ՆԱԶԵԼԻ ԱՐՍԵՆՅԱՆ |
| ՇԱՆԹ ՎԱՀԱՆՅԱՆ | ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ |
| ՄԵՐԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ | ՍՈՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ |
| ԱՐԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ | ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ |
| ԳՈՌ ԱՐՇԱԿՅԱՆ | ԳՆԵԼ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ |
| ՌՈՒԶԱՆՆԱ ՏՈՆՈՅԱՆ | ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ |
| ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ | ԿԱՐԱՊԵՏ ԱՌԱՔԵԼՅԱՆ |
| ԺԱՆՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ | ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ |
| ԲԱՎԱԿԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ | ԱՐՄԵՆ ՇՄԱՎՈՆՅԱՆ |
| ԱՐՏԱՇԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ | ԳԵՎՈՐԳ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ |

*Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

***17-ը հոկտեմբերի 2025թ.***

**ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՔԱՆԴԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

---

***Արձ.- 56***

***/Զեկուցող՝ Ն. ՄՈՒՐԱԴՅԱՆ/***

***N 142 - Ա ՈՐՈՇՈՒՄ***

*Հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով, Աշտարակ համայնքի ավագանին՝*

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Համաձայնություն տալ Աշտարակ համայնքի Ուջի բնակավայրի 4-րդ փողոց N 3/1 հասցեում գտնվող /կադաստրային ծածկագիր՝ 02-108-0039-0032/, համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքը /բուժամբուլատորիա/ նորակառույց մանկապարտեզի հարակից տարածքը բարեկարգելու և երեխաների անվտանգությունն ապահովելու նպատակով քանդելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:
2. Ուջի բնակավայրի բնակիչների բժշկական ծառայություններն իրականացնել համայնքային ենթակայության այլ շինության տարածքում:
3. Սույն որոշումից բխող հետագա իրավական ակտերի ընդունումը վերապահել Աշտարակ համայնքի ղեկավարին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

***Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝***

***ԿՈՂՄ - 20*** ***ԴԵՄ- 0*** ***ՁԵՌՆՊԱՀ – 0***

| | |
|---|---|
| ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ | ՆԱԶԵԼԻ ԱՐՍԵՆՅԱՆ |
| ՇԱՆԹ ՎԱՀԱՆՅԱՆ | ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ |
| ՄԵՐԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ | ՍՈՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ |
| ԱՐԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ | ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ |
| ԳՈՌ ԱՐՇԱԿՅԱՆ | ԳՆԵԼ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ |
| ՌՈՒԶԱՆՆԱ ՏՈՆՈՅԱՆ | ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ |
| ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ | ԿԱՐԱՊԵՏ ԱՌԱՔԵԼՅԱՆ |
| ԺԱՆՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ | ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ |
| ԲԱՎԱԿԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ | ԱՐՄԵՆ ՇՄԱՎՈՆՅԱՆ |
| ԱՐՏԱՇԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ | ԳԵՎՈՐԳ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ |

***Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:***

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն**

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*17-ը հոկտեմբերի 2025թ.*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

***Արձ.- 56***

*/Զեկուցող՝ Ն. ՄՈՒՐԱԴՅԱՆ/*

***Ն 143 - Ա ՈՐՈՇՈՒՄ***

*Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեի նախագահի տեղակալի 17.09.2025թ. N 02.3/15/4782-2025 գրությունը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով, Աշտարակ համայնքի ավագանին՝*

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.**

1. ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Արզնի-Շամիրամ 2-րդ հերթի ջրանցքի ՆՇ29+90 հատվածում գտնվող՝ Մուղնու 25.0 հազ. խմ ծավալով օրվա կարգավորման ջրավազանի հիմնանորոգման նպատակով ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի Վանածորի խճուղի 2/1 ջրավազան հասցեի /ծածկագիր՝ 02-001-0304-0062/ անշարժ գույքը նվիրաբերել Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեի:

**<u>Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝</u>**

*ԿՈՂՄ - 20* *ԴԵՄ- 0* *ՁԵՌՆՊԱՀ – 0*

| | |
|---|---|
| ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ | ՆԱԶԵԼԻ ԱՐՍԵՆՅԱՆ |
| ՇԱՆԹ ՎԱՀԱՆՅԱՆ | ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ |
| ՄԵՐԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ | ՍՈՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ |
| ԱՐԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ | ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ |
| ԳՈՌ ԱՐՇԱԿՅԱՆ | ԳՆԵԼ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ |
| ՌՈՒԶԱՆՆԱ ՏՈՆՈՅԱՆ | ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ |
| ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ | ԿԱՐԱՊԵՏ ԱՌԱՔԵԼՅԱՆ |
| ԺԱՆՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ | ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ |
| ԲԱՎԱԿԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ | ԱՐՄԵՆ ՇՄԱՎՈՆՅԱՆ |
| ԱՐՏԱՇԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ | ԳԵՎՈՐԳ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ |

*Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:*

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն**